

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Ինքնուրուպ գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար փճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ինչքան խօսես չի օգնի:— Եւրջին տեսու-
թիւն: Հայոց թատրոնը Նամակ Բագրուից: Ներ-
քին լուրերը:— Արտաքին տեսու-թիւն: Ֆը-
րանսիա: Թիւրքիա: Նամակ Թիւրքիայից:— Մը-
շակի: հեռագիրներ:— Յայտարարութիւններ:—
Տեղեկացոյց:

ԻՆՉՔԱՆ ԽՕՍԵՍ ԶԻ ՕԳՆԻ

«Օճօրք» լրագիրը մեզ կրկին
պատասխանել է:

Նա հաւատացնում է որ մենք
հերքում ենք որ և է ազգի հա-
մար մայրենի լեզուով սովորելու
անհրաժեշտութիւնը:

Մենք միշտ պաշտպանել ենք
և միշտ կը պաշտպանենք սկզ-
բունքի մէջ ամեն ազգութեան
համար իր մայրենի լեզուով սո-
վորելու անհրաժեշտութիւնը, ո-
րովհետեւ մայրենի լեզուն մանուկի
համար միակ մատչելի և հասկա-
նալի լեզու է, ուրեմն նա աւելի
զարգացուցիչ է նրա ուղեղի կա-
նօնաւոր զարգացման համար քան
թէ մի որ և է օտար լեզու:
Մայրենի լեզուն լինելով արդիւնք
ցեղական կեանքի պատմական
զարգացման, ուրեմն և ամենա-
յարմարն է այն ցեղին պատկա-
նող մանուկի ուղեղի կանօնաւոր
և արագ անհատական զարգաց-
ման:

Բայց եթէ ազգին պատկանող
լեզուն ինքն աղքատ և անզար-
գացած է, եթէ օրինակ, ինչպէս
մի քանի լեռնական ժողովուրդների
մէջ նա չունի ամենատարրական
գաղափարներ արտայայտող բա-
ռերը, եթէ նա անընդունակ է
հետզհետէ զարգանալուն, եթէ
նրա միտմանի բառերից անհնա-
րին է կազմել բարդ բառեր, եթէ
նա իր ֆիլոսոփական աղքատ ձե-
ւերի և նախնական կազմակերպու-
թեան պատճառով միշտ անշարժ
կը մնայ, անընդունակ լինելով
սեփականացնել նոր, թէև ամե-
նատարրական գաղափարները և
արտայայտել նրանց համեմատ
բառերով, — միթէ այդ տեսակ
մայրենի լեզու նոյնպէս օգտուէտ
է երեխայի կանօնաւոր մտաւոր
զարգացման համար:

Եթէ ընդունենք մանաւանդ որ
բոլոր մարդիկները, բոլոր մանուկ-

ները ուղեղները միատեսակ կանօ-
նաւոր կերպով են ստեղծված,
ինչպէս կարծում է «Օճօրք» այդ
միթէ բարբարոսութիւն չէր լինի
որ երեխաներից մի քանիսներին
մենք դատապարտէինք ուսում
առնել զարգացման անընդունակ
լեզուով, միայն այն պատճառով որ
այդ նրանց մայրենի լեզու է, իսկ
ուրիշներին դատապարտէինք հա-
րուստ և զարգացման ընդունակ
լեզուով....

Վերջապէս եթէ ընդունենք
«Օճօրք» լրագրից արած նոր ֆի-
լոսոփական և պատմական գիտող,
թէ թիւրքերը մօնղոլներ չեն, այլ
օրինակ Կովկասեան, հնդկա-եւ-
րօպական ցեղին են պատկանում,
— այդ կը հակառակէր նոյն իսկ
ուսումնաբերողը յայտնաւոր մըտ-
քերին: Ուրեմն ինչ էիք այդքան
հօգում թիւրքերի և թաթարների
մէջ թիւրքերէն լեզու մանցնելու
մասին, երբ այդ լեզուն նրանց
մայրենի լեզու չէ.... Թիւրքերը,
ասում էք, մօնղոլներ չեն, բայց
դուք չէք կարող հերքել որ նը-
րանց խօսած լեզուն, թիւրքե-
րէնը Վ. Պոլսից սկսած մինչև
Եստրախան և Ղազան նոյն մօն-
ղօլական լեզու է: Ղազանի
թաթարը Ռուսաստանը մի ժա-
մանակ նուաճած մօնղոլների այդ
մնացորդը, խօսում է նոյն լեզուով,
քիչ զանազանութեամբ արտասա-
նութեան և բարբառի մէջ, ինչ
լեզուով որ խօսում է Վ. Պոլսի
էֆէնդին....

Ուրեմն Տաճկաստանի թիւրքը,
ձեր կարծիքով Կովկասեան ցեղին
պատկանող այդ ազգը, խօսում է
իր համար օտար մօնղոլական լե-
զուով.... Ի՞նչ է ք պնդում, ու-
րեմն նրա համար օտար լեզուով
սովորելու անհրաժեշտութեան վրա
և հաստատում էք թէ Կովկա-
սեան ցեղի մարդու համար մօն-
ղոլական լեզուն մայրենի է:

Ահա, պարոններ որտեղ կա-
րելի է հասնել լոգիկայի պակա-
սութեան պատճառով....

Եթէ մենք կանգնէինք ուսու-
լիցի տեսակետի վրա, մենք
զուգէ մահմետական բոլոր ցեղերի
անշարժութեան պատճառը կը

զանէինք նոյն իսկ այն երևոյթի-
մէջ, որ բոլոր մահմետական ազ-
գերը, որ ցեղին և պատկանէին
նրանք, մահմետականութեան հետ
ընդունեցին և օտար, իրանց ցեղի
ֆիլոսոփական կեանքին անյար-
մար օտար բաղադրակութիւնը
օտար լեզուով, օտար ցեղի ար-
դիւնք եղած գրութեան ձևերի
հետ....

Պարսիկները, արիական ցեղի
այդ ազգը, մահմետականութեան
հետ ընդունեցին օտար, սեմիտա-
կան ցեղի գրութեան ձևը: Թիւրք
սելճուկները, ձեր նոր գտած այդ
Կովկասեան ցեղը, իրանց արշա-
ւանքների ժամանակ մօնղոլ ա-
ռաջնորդների ազդեցութեան տակ,
ընդունեցին ուրեմն իրանց համար
օտար մօնղոլական լեզուն, և մահ-
մետականութեան հետ նոյնպէս
իրանց համար օտար արարական,
ուրեմն սեմիտական ցեղի տառա-
գրութիւնը:

Եւրոպայով «Օճօրք» լրագրի
բոլոր յօդուածները ջուրն են ըն-
կնում, նա իր լոգիկան այնտեղ
հասցրեց, որ ինքն իր ձեռքե-
րով իր բոլոր հիմունքները քան-
դէց:

Եւթմ մնում է ուսումնաբերողին
խոստովանել, որ իր պաշտպանված
թէ թիւրքերի, թէ մահմետական
աշխարհի մնացած ազգերի մեծ
մասի համար, որոնք նրա կարծի-
քով արիական և ոչ մօնղոլական
ցեղին են պատկանում (մասամբ
և այդ ուղիղ է) աւելի օգտուէտ
կը լինէր նրանց մտաւոր կանօ-
նաւոր զարգացման համար մոց-
նել նրանց ցեղին յատուկ որ և է
արիական ծագումի լեզուն, քան
թէ մօնղոլական լեզուն և արա-
բական տառերը, որովհետեւ եր-
կուն է և օտար են նրանց համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Մէկ արշին ու կէս երկարութիւն և մի
արշին լայնութիւն ունեցող փառաւոր ափի-
շան աւետեց Թիֆլիսի հայ հասարակութեա-
նը, որ մեր հիւանդ տաղանդաւոր դերասան
պ. Ամերիկեանը Ներքինիան զարդի զահլե-
ծում պէտք է մի ներկայացում տար Այդ

ափիշան աւետեց, որ կը ներկայացվեն՝ «Հայ
նկարչներ» (Ն) հեղ. Սալադուրի, փոխարկու-
թիւն պ. Չմկեանի, իշխան Բէհրուզեանի
րեպերտուարից, երգերը յարմարեցրած Ամե-
րիկեանից, «Բարբուլէ» հեղ. Մօլեթի եր-
գային փոխարկութիւն Ամերիկեանի (խեղճ
Մօլեթը, քիչ փնտրված է անողորմ կերպով
աղաւաղվել հայ թատրոնական գործիչների
ձեռքով) և բացի այդ անտարկտի ժամանակ
պէտք է լինէր հայ-վրացական գրական հան-
դէս: Աֆիշայի մասին մեր խօսքը վերջացնե-
լու համար կասենք, որ մեր տաղանդաւոր
հիւանդ դերասանը ամեն տեսակ աշխատանք
գործ էր արել նրան բազմակողմանի անելու
համար: Տեղերի գները չափազանց թանկ էին
նշանակած: Հասարակութեանց շատերը տը-
տնջում էին, որ 2 ռուբլ վարձելով, նրանց
տան և հինգերորդ կարգում էին նստեցրել:
Այդ գանգաւորները հասարակութեան կողմից
լավում էին դեռ ներկայացմանից առաջ, բայց
անու ամենայնիւ դահլիճը լինէր էր. մեր հա-
սարակութիւնը միշտ գնահատում է իր հի-
ւանդ տաղանդներին և նրանց պահպանում
է: Առաջինը խաղացվեցաւ «Հայ նկա-
րչներ» պիեսան: Դա մի աղափարած, ան-
բնական և անձիւղ փոխարկութիւն էր:
Նրեակայի քեզ, ընթերցող, չուշեցի նկարչ-
ներին, որոնք ունեն բոլոր նկարիչների յատ-
կութիւնները, Նրեակայ, երաջներ են
տեսնում, դափնիով պատկվում են և նրանցից
մէկը վերջը ամուսնանում է մի աղջկայ հետ:
Նրեակայի նկարիչների կինոյայցրած յոյսե-
րը, Օֆէնբախի երեք աստուածուհիների երգի
եղանակը, հարած ծառայ, խաբած հայր,
խաբէրէն լեզու և մի քանի այսպիսի ան-
կապ բաներ և դու գաղափար կը ստանաս
«Հայ նկարչներ» պիեսայի մասին, որին միայն
կանկան էր պակաս Այդ պիեսան (փոխար-
կութիւնը) ինքն ըստ ինքեան անհամ և ան-
զոյն լինելով աւելի ևս անպիտան խաղաց-
վեցաւ: Միայն պ. Լալայեանը ցոյց տուեց,
որ կարող էր լաւ խաղալ, եթէ նրան չըջա-
պատող խաղացողները աւելի չնորհ ունե-
նային: Նրկորդ պիեսան խաղացվեցաւ «Բա ր-
բուլէ», Մօլեթի հնդկականութիւն, ինչպէս
ասված էր աֆիշայի մէջ և երգային յարմա-
րութիւններ պ. Ամերիկեանի: Այդ գրուած-
քի մէջ ոչինչ Մօլեթական չը կար: Դա մի
փողոցային մի քանի երգերով համեմած փո-
ղովի էր: Պիեսայի մէջ կար պառաւ հայր,
Փրանսիացու գրիմով և Թեֆլիսի բարբառով
խօսող: Կար Փրանսիացի բժիշկ ուսու վիցմու-
ղի հագած և այլն: Ներկայացմանը մասնակ-
ցում էր տ. Շահաղեղեանը: Նրկու վօդովի-
ների մէջ տեղի ունեցաւ հայ վրացական
գրական հանդէսը, որ պսակվեցաւ կրկնակի
անկարգութեամբ: Հանդէսի ժամանակ պ.
Չմկեանը կարգաց մի քանի ոտանաւորներ,
յետոյ Ամերիկեանը պատմեց երկու առած-
ներ և կօմիկական կուպլետներ երգեց, իսկ
պարոնից յետոյ վրացի Ումիկով վրաց լեզուով
սկսեց կարգալ մի անցքի նկարագրութիւնը:
Պարոն Ումիկով շատ ցած ձայնով էր կարգում:
Հասարակութիւնը ոչինչ չէր լսում: Տեսեի
կարգերից առաջ կանգնում էին, որ պարոնի
բարձր կարգայ, յետոյ աղմուկը այնքան սասա-
կացաւ, որ պ. Ումիկով ստիպված էր թող-
նել ընթերցանութիւնը: Պէտք է խոստովա-
նել, որ հասարակութեան մի բաժինը շատ
անկարգ վարվեցաւ: Որքան էլ վատ և ան-

Հասկանալի լինէր պարոնի ընթերցանութիւնը, հասարակութիւնը պէտք է պատուէր մի օտար երեւոյթարարի, որ մասնակցել է հայ ներկայացմանը, պէտք է ծափահարութիւններով ընդունէր մի վրացու, որ համակրում է հայ թատրոնական գործին (թէպէտ պ. Ամերիկեանի ներկայացումը թատրոնական գործի հետ ոչինչ յարաբերութիւն չունէր): Բայց հասարակութեան մի մասը աններելի սխալ գործեց: Մի կողմից պէտք է խոստովանենք, որ հասարակութեան այդպիսի վարմունքը ոչինչ կուսակցական պատճառներէն չը յառաջացաւ, այլ պ. Ամերիկեանի ցած ընթերցանութեան հետեանք էր: Պարոն Ամերիկեանը ժողովրդական գործիչ և նրա ցաւերի համար մտածող անձինքներից մէկը լինելով, անկասկած ներդրումներ կը լինի դէպի ամբողջ աշխարհ, բայց մենք չը գիտենք ինչպէս մեկնենք պ. Ամերիկեանի վարմունքը: Այդ անցքից յետոյ պ. Ամերիկեանը բեմ դուրս եկաւ և իր կողմից հրապարակապէս ներողութիւն խնդրեց պ. Ամերիկեանի վրէժը: Այսքանը մեր կարծիքով բաւական էր, իսկ պ. Ամերիկեանը հարկաւոր համարեց յանդիմանել հասարակութիւնը, նրա մի մասի վարմունքը բազմապիսի անուանել: Պարոնը լսել է զանգակի ձայնը և չը գիտէ թէ նա որտեղից է: Պարոնը գիտէ, որ կարելի է հասարակութեան վրա յարձակուիլ, բայց չը գիտէ, թէ այդ բանը ո՞վ և ինչպէս պէտք է անէ: Միթէ պ. Ամերիկեանը չէ հասկանում հասարակութեան նրա ներկայացմանը (չը նայելով թանգ գնեցին) գանձելու պատճառը: Միթէ պարոնը չը մտածեց, որ հասարակութիւնը եկել էր իր ինքնակրկին ապրուստի միջոց տալու համար: Նրա գործը չէր այդպիսի կոպիտ կերպով հասարակութիւնը խրատելու յանդիմանել: Նա պէտք է բաւականանար Պ. Ամերիկեանի իր կողմից ներողութիւն խնդրելով:

8. Տեր-Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

4 նոյեմբերի

Դուք պահանջում էք Բագուի ազգային և հասարակական կեանքից ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել. այդ իմ պարտքս է, խոստացել եմ. բայց որքան և պատրաստ լինեմ ձեր փափագը ցոյցանելու դարձեալ շատ աշխատութիւն և ժամանակ է հարկաւոր:

Բագու, ինչպէս գիտեք, առհասարակ լաւ անուն ունի բարի և ազգայնաճ գործերի վերաբերութեամբ, բայց այն արուեստական և կեղծ անուն է՝ շահագնէրների և փողապաշտների ջանքով հռչակված. այս րոպէիս բոլոր ազգային շահերը և հողակիւր բարձր թողի արած, անտէր և անխնամ վիճակի մէջ են այստեղ, Ընդհանուր օգուտն ու շնորհը ոչ ոքին չէ զբաղեցնում. ամենքը, առանց բացառութեան, իրանց անձնականի և հարստանալու ետեւից են ընկած. ամենքի խոսակցութեան և մտածութեան առարկան նաեւն է, ամենքի ամբողջ գոյութեանը կերպիւնի հոտ է բուրում: Ո՞վքեր են այս ամենքը ասածը—նրանք, որ ժամանակ, կարողութիւն, ամենատեսակ միջոցներ, ուրեմն և պարտք ունեն հասարակական ցաւերը խնամելու, և ոչ թէ անձայն, անիրաւունք և հազար ու մի ծնունդների ենթարկված ժողովուրդը: Մի տեսակ մարդիկ, որոնք կոյր բաղդի և իրանց ծարպիկութեան չնորոգ հասարակաց գործերում գլխաւորի և առաջնորդողի դեր ունեն, զերթէ միշտ շղթայում են և կաշկանդում ամեն առաջադիմութիւն և կանոնաւոր զարգացում. խոսացնեն այսպիսիներին՝ ազգասէր են, բարութեան և առաքելութեան տիպարներ. բայց գործերը և իրանց մեղած անտարբերութիւնը հակառակն են քարոզում: Այս տարվայ զարուեսքին մի գիտնական կրօնաւորից իր բարեկամը հարցրել էր. «Պարոն, դու անդադար գրում և աղաղակում ես ի մ պ ա շ տ և լ ի հ ա յ և ր, ի մ օ ո ս և լ ի ա զ գ, բայց և անդադար անարգում և հայհուում ես մասնաւոր անձինքներին, քաղաքներին և ամբողջ հայութիւնն և քո խնամքին անարժան ես համարում նրանց, ըստ էլ ինչով ես դու հ ա յ ա-

սէր, որն է քո պաշտած ազգութիւնը». նա մեծ վստահութեամբ պատասխանել էր. «Հապա, իմ պաշտած ազգութիւնը իդէալական մի բան է, որ իրականութեան մէջ չը կայ, այլ նոր պէտք է ստեղծվի»: Մեր առաջադրանքը այս կրօնաւորի պէս են. յօծար են միշտ և պատրաստ օգնելու ոչ թէ կենդանի և իրանց շուրջը տանջվող՝ այլ երեակայական կամ զաւրց հայերին. և այս նրանց է որ նիս ես ասածը շատ սիրած և վաղուց արուեստ չինած գործ՝ այս դէպքում ևս չեն ցանկանում նա զ գ բան բռնել: Սրանք պէտք է դեկավարեն մեր ներկան և նախատեսանեն ու տնօրինեն մեր ապագան. սրանցից է սպասում ազգի թշուառ մասը իր անթիւ վիտերի դարմանը: Եւ ի՞նչ սպասողներ, խաբված էք ձեր յոյսերից:

Բագուի բազմաթիւ հարուստ հայը մինչև այսօր դեռ չը կարողացաւ փութի ի շատէ բարեկարգ դպրոցներ ունենալ: Երբեք տարի առաջ մի կուսածաղիկ վարդապետ հրաւիրեցին, որ պէտք է լոյս տար մեծերին և փոքրերին. փութերը չը գիտեմ, բայց մեծերը իսկապէս օգուտ քաղեցին նրանից, վէճերի և կռիւների զատիկ առին և բազմատեսակ կիրքեր արժարեցին, որոնցով և զբաղվեցան մինչև վերջին ժամանակներս: Որպէս զի աշխարհը հիւսնար մեր առաջադիմութեանց և որպէս զի մի քանի պաշտօնական հարցերի կարողանալին պատասխան կարգաւորել, հրատարակեցին թէ Բագուն միջնակարգ դպրոց ունի, բայց մէջ տեղ ոչ կանոնադրութիւն կար, ոչ նրա համար որոշած դուրմար և ոչ ծիսականի կուրսն աւարտած աշակերտներ. մի սենական հաւաքված էին 7-16 տարեկան մի քանի մանուկներ, որոնք, գիտեն ամենքը, Ստեփանէի փրկչեան դպրոցի (կամ համալսարանի) սաներն էին: Այժմ Ստեփանէի հետ միասին ոչ միայն ամեն ինչ հեռացած, այլ և անհետացած, անիրաւութեան է մէջ տեղից: Բայց, սով բարի հայեր, ձեր են ձեր միջնակարգ դպրոցը և այն բարեկարգութիւնը, որ երկնք է ի՞նչ բարձրացնում. միթէ մի անձի հեռանալով կամ մեղմելով հասարակաց հիմնարկութիւնները կարող են յանկարծակի կորչել, օգը ցնդել և հետք անգամ չը թողել: Ասում են Ստեփանէի դնակը յետոյ ոչ մի նիւթական ապացոյց չէ մնացել, որով կարելի լինէր իմանալ, թէ նա ինչ բարեկարգութիւն է արել. դատացուցակներն անգամ իրանց շրջանակներով պատերից պոկված և կորած են. և այս մի այլանդակ վարդապետութիւն է՝ ցանկանալ, որ իրանից յետոյ աւեր և կործանում միայն մնայ: Ներկայումս բագուցից դեռ բաւականաճ են նախկին երկու դպրոցներով, որոնցից օրիորդականը (Վարդապետի ընկերութեան) հաշուէ և պահուում իսկ արականը՝ եկեղեցիների: Չեմ կարող ասանց մոմոռելու յիշել այս դպրոցների ողբալի դրութիւնը: (Մարդ. ընկ.) և հողաբարձութեան բազմաթիւ անդամները ու անդամուհիք իսպառ անտարբեր են դէպի սրանց, որոնց անունով այնքան ջիւղեմանդութիւն կամը կուսակցութիւններ կաղմեցին մի ժամանակ և կուսեցին միմեանց դէմ: Սեփականներից ուսումնաքը սկսված է մի կերպով. աշակերտները սակավութիւն (մասնաւոր օրիորդները, որ հազիւ մօտ 30 հոգի են), սեզանները անպիտան, ձեռնարկների և այլ օժանդակով միջոցների զգալի կարողութիւն, ծեծը և ջարդը անխնայ գործածութեան մէջ և այլն.... Այսքան տարիներ դեռ չեն հասկացրել և ընտելացրել ժողովրդիդին, որ երեխաներին որոշեալ հասակում և ժամանակում ուսումնարան տան, երբ և ով հասնի՝ տանում և ընդունում են առանց կանոնի. նոր սկսողը գնում է 4-5 ամիս կամ տարիներով կարդացածի հետ նստում և պարպութիւնից ծանծաղացած՝ չարութիւն անում, ուստի այցելու կարող է մի դասարանում ամեն շ է շ ի գ ձ արել: Լաւ էր որ կանոնաւոր կաղմակերպված ընթերցանութեան լինէին և կարգին և ուղի մանկավարժութեան պահանջներին. վարժապետների գործունէութեան մէջ կայ չը կայ, ոչ իր ընկերի արածից տեղեկութիւններ, իւրաքանչիւրը առանձին ծանուցարանով է գնում, իր խղճի և հաճողի թելադրութեամբ, և այս մասին, կարծեմ, նրանց իրաւունք է տուած: Տուել կար, աշակերտներ կային, վարժապետներին էլ վարձեցին ու ներս ուղարկեցին, այնուհետև ինչ կարող են և կուզեն՝ թող այն ա-

նեն, պրծաւ դնաց... Լաւ է՞: Եւ ուսուցիչների մեծ մասը անփութ գոյով՝ չը գիտենք թէ որքան օգուտ կարող է բերել այն ընդհանուր խառնակութեանը մէջ, Զարմանալի է. միթէ հ. Բուդաղեանը չէր կարող վարժապետական խորհուրդ նշանակել, որ ամենքը պարտաւորված, չարաթը մի կամ երկու անգամ ժողովէին իր նախագահութեամբ և խորհէին ու հողային զբաղմունքներին, կարող էր թէ բարեհաճէր: Ես համոզված եմ, որ այնպիսի նիստերը լաւ հետեանք են իրենցնային, վարժապետները կը փորձէին, ուսումնական մասը կը բարեկարգվէր փութի շատէ և այնքան ժամանակ, զբաղմունքները կը լինէին կորչի՝ ինչպէս որ կորչում են Այժմեան վարժապետների մէջ կայ մի պարոն, որը տեսական և գործնական մանկավարժութեան հմուտ է. կարելի է հաստատ ասել, որ նա իր աշխատութիւնը չէր խնայի վերոյիշեալ նիստերին առաջնորդել, ուղղութիւն տալ և մի քանի օրինակել: Դասեր անգամ կարդալ ուսուցիչներին, որից մեծապէս կօգտվէին: Այս պարոնը հայ է, ինչպէս և ուսումնարանի պատրաստականի վարժապետ:

Անգաղար լսում ենք, որ դպրոցների համար օրինաւոր տեսուչ են բերել տալիս, բայց 3-4 ամիս անցաւ, դեռ չը կայ: Երկար ժամանակ նախաձեռն և հեռադիւրներով խօսելուց յետոյ գրտնվել են ումանք, որ զաւու ցանկութիւն են յայտնել. բայց երբ «Վարդապ. ընկերութեան» խորհուրդի անդամներից մի քանիսը հաւաքվել են վճռական պատասխանը դրելու, տարակուսած կանգ են առել, փողի հաստատուն աղբիւր չունենալով եկողին վարձատրելու համար. վերջը, ասում են, մի կերպով (ի հարկէ խախտ) համաձայնութիւն են յայտնել և հրաւիրել. սպասում ենք այս օրերս: Տեսնում էք ինչ տարօրինակ եղանակով են մերոնք ազգային գործերը չինում, այսինքն փոխանակ հիմքի տանիքին են սկսում, ամենից առաջ հողաւոր և պատրաստելու վերջն են մտածում: Բայց աւելի լաւ էր լինի, որ նախ դրամի աղբիւրն ապահովէին և ապա մասնաւոր անձանց դիմելու և բերմունքով գործելու փոխանակ լրագրութեան միջոցով տեսիլ իրաւունքն ու պարտքը հրատարակէին. այնուհետև, որպէս հաւանական է, մէկի կամ երկուսի տեղ մի քանիսը կը յայտնվէին, որով և հնչաւ կը լինէր գաւառ և չլրահարեաց ընտրութիւն անելով՝ երկար ժամանակի համար լուծել տեսիլ կարեւոր խնդիրը:

Գլխաւորում ուսումը սկսվելիս կրօնի դասերը առաջարկվեցան քահանաներին, բայց նրանք չը գիտեն ինչու, յանձն չառին: Այս վարմունքից մի քանի առաջաւորներ իբր թէ վստահալով՝ որոշել են «Սոխակի» խմբակի—հրատարակչի պ. Առաջ Գրիգորեանից (որ անպաշտօն է այժմ)՝ Վարդապ. ընկերութեան միջոցով թանկութեամբ չուտով քահանայ ձեռնադրել տալ և կրօնական ուսումնեցների ու հայոց պատմութեան մշտական վարժապետ չինել: Մեր դպրոցներում այս լուրջ պէս ամենակարեւոր և ամենազգուշար առանդելքը կրօնը և հայոց պատմութիւնն են. սրանց ուսուցիչը պէտք է շատ ընթերցասիրտ և նախապատրաստված լինի, պէտք է ս. Գրքի և մեր հին և նոր դպրոցներին հմուտ և վարժ լինի, պէտք է մի տեսակ ձգտումն և ոգևորութիւն ևս ունենայ այս առարկաների ուսումը մարմնացնելու և նրան իբրեւ մի կրթողական ամենահզօր գէշը դարձնելու: Բացի դրանից անպատճառ հարկաւոր է ծխական դպրոցներում խրաքանչիւր դասարանի կրօնի, հայոց լեզուի և հ. պատմութեան դասերը մի և նոյն վարժապետի յանձնել, որի օգտակարութեանն ու անհրաժեշտութեան կարող են վկայել փորձված մանկավարժները. մանաւանդ որ ով հայոց լեզու լաւ գիտէ, կրօն և հ. պատմութիւն ևս գիտէ, որովհետև մեր մատենադարանութեան մեծ մասը գրեթէ ամբողջապէս կրօնական և պատմական է միայն: Բայց արդեօք պ. Ա. Գրիգորեանն ունի այս ամենինը և ընտրողները քանի ու իմացել են այն, չեմ կարծում. եթէ նա կարողանում է բաղաձայն «Սոխակի» վաճառել ամբողջ վրա, այդ դեռ չէ ցոյց տալիս թէ Բագուի պէս քաղաքում վարժապետի և քահանայի ծանր լուծն ևս կարող է յաջողութեամբ կրել և մեծ վնաս չը հասցնել հասարակութեանը: Ինչ հարկաւոր է 6-րդ քահանայ, երբ այժմ 5-ն ունենք, խղճմտանքով դատելով, նրանց մէջ կը գտնվի ամեն կերպով անելի արժանաւոր և յարմարաւոր քան նորընտիր քահանայացուն. ինչու արդէն եղածից օգուտ չը քաղենք: Գուցէ կը պատասխանեն թէ նա

յանձն չէ առնում. ինչպէս կարող է յանձն չառնել, երբ նա ևս մի քանի տարի առաջ նոյն նպատակով է ձեռնադրվել, և միթէ կարծելք է թէ նորընտիրն ևս փլուրդ ստանալից յետոյ չէ խորհելու կրօնից և մերժելու դպրոցը. ինչ երաշխաւորութիւն կայ թէ սա աւելի ուշ ուխտադանց կը լինի քան թէ նա: Յանձն չէ առնում, բայց հոգեւոր իշխանութիւնը որ հրամայէ և դպրոցի վարչութիւնը նրա աշխատանքը կարգին վարձատրէ նա ընդդիմանալ չէ կարող: Ամենքն ընդունում և ազգայնում են, որ եկեղեցին և դպրոցը ազգի գոյութեան հիմքն են, բայց մեր առաջաւորները այս երկուսի համար ևս պաշտօնեաներ ընտրելու մէջ շատ դարձանալի և օտարօտի եղանակ են գործածում, այսինքն նրանք աշխատում են ոչ թէ պաշտօնի և պարտաւորութեան համար արժանաւոր մարդիկ ձարել, այլ սրան կամ նրան տեղ տալ, գործ գտնել ապրուստ ձարելու համար: Շատերը, որոնք կամ անընդունակ ու ծոյլ են, կամ ձախորդ հանգամանքների դէմ օրհնական պատերազմ մղելով յաղթված, կամ կեղծաւոր և չողոքողութեամբ, կամ անորոշ և անցողական վիճակի մէջ, կամ հաստատուն զբաղմունք որոնող, առանց երկար տատանելու և ծանր—թեթեւ անելու կամ եկեղեցական են դառնում և կամ վարժապետ և այս ցաւալի և միասնակար սովորութեան շնորհով հայ եկեղեցին և դպրոցը, սակաւթիւ բացառութիւններով, կատարեալ անկեղծոյցներ են դարձել. սորանից է, որ մեղանում լաւ քահանաների թիւը չէ զբաղմունքում և հաստատուն ու փորձված ուսուցիչների սով է: Այս մեր բռնած ձանաղապի ծայրում մի անգամի խորխորատ է երևում ինձ, որից քանի գնում՝ այնքան աւելի սարսափում եմ, Ընտրողները և առաջաւորները անկատարում են և գուցէ դեռ երկար ժամանակ իրանց տաժոյ գնան. բայց անձնաքննութիւնը ու ինքնաձանաչութիւնը այնպիսի գեղեցիկ յատկութիւններ են որ անպատճառ պէտք է ունենան ժողովուրդի հովիւ և մասնակցների դաստիարակ լինել ցանկացողները: Նրանք թէ գոնէ սրանք այնքան բարեխիղճ և հեռատես լինէին, որ իրանց կարողութիւնից վեր բանի չը ձեռնարկէին, որով մի կողմից տեղը և ասպարէզը ընդունակ և արժանաւոր գործողներին կը մնային, իսկ միւս կողմից ընդհանուր շահերը կ'աճէին:

Այստեղ ի դէպ եմ համարում ստուգաւորներն ու չքը դարձնել յետագայիս վրա: Մի քանի ժամանակից դէսը ոմանք աշխատում են տարածել և արմատացնել այն միտքը, թէ մեր զբաղմունքներում կրօնական ուսումնեցների դաստաւորութիւնը բացառապէս պէտք է եկեղեցականի յանձնել. իմ կարծիքով նա մեր եկեղեցու և ժողովուրդի ոգուն հակառակ և սխալ գաղափար է, որի ընդհանրաւոր հարկաւոր է արգելել: Հայ—քրիստոնեան կաթօղիկ չէ. նա ցանկանում է որ երեխան իր նախնեաց հաւատը սովորէ, ով ուզում է թող սովորացնէ, նրա համար այդ մի և նոյն է, միայն թէ լաւ և ուղիղ սովորացնէ: Այս մեղալաճառական գաղափարի պատգամները իրանց արդարացնելու համար շատ անգամ պիտուութիւնն են պատճառ բռնում իբր թէ նա լինի այնպէս պահանջելիս. բայց ես երբեք չեմ կարող հաւատալ, քանի որ պիտուութեան ուսումնարաններում սովորական է տեսնել աշխարհական վարժապետներ և վարժուհիներ կրօն ուսուցանելիս, ուսուցաց հոգեւոր դպրոցներում յանձն տեսած եմ, որ քահանան լատիներէնը կամ մի այլ առարկայ է ուսուցանում, իսկ կրօնը մի աշխարհական: Եւ ինչու պէտք է խորութիւն դնել, ով առաւել արժանաւոր և յարմարաւոր է թող նա ուսուցանէ: միթէ այսօրվայ անարժանք սկսեցանք մէջ փաթեթվելով՝ վաղը յանկարծ արժանաւոր կը դառնայ. բացի սրանից հայոց լեզուի լաւ ուսուցիչն մինչև անգամ մեծ ամօթ կը համարեմ, եթէ նա քահանայի չափ իր կրօնը չիմանայ, դեռ չեմ յիշում գիւղական վարժապետն ու քահանան, որոնց մէջ սարկի կան: Երբեք չեմ մոռանայ այս հարցի մասին մի վարդապետի և մի հայ դպրոցի հողաբարձութեան մէջ պատահած վէճը, որին ականատես զոտնվեցայ չորս տարի առաջ: Բոլոր եկեղեցական դասը, հողաբարձուներ, երեցիներ, աշակերտներ, ուսուցիչներ և այլք ժողովված էին դպրոցի դահլիճը, որ աշակերտներ ընտրեն իջմիծին ձեռնադրան համար. վարդապետը հարցաքննեց, զոհ մնաց, բայց կրօնի մասին զարացած աղաղակեց, թէ ինչպէս կարելի է, որ այնպիսի կարեւոր առարկան մի աշխարհականի են յանձնել: Հողաբարձուք բացառեցին թէ՛ ս. առաքնորդի հա-

մաճախութեամբ և մանուկներին առաջադիմութեան համար էր այնպէս տնօրինված. քահանաներից ընդունակ համարվածները ևս յայտնապէս խոստովանեցին, որ թէ եւրոպայէ կարող էին, բայց գիտեցողքը արժանաւոր իրանցից հիմնաւոր և լաւ է սովորացնում, զիւրազանքն էին արել, երբ վարդապետը իրանց էր շարունակում մի հոգաբարձու վրդովված ասաց. «Հաւր—սուրբ, ինչ էք բարկանում, մենք դպրոցի օգնական տեսնելով այսպէս ենք արել, որից ամեն ինչ էլ գոհ են, ինքը արագանն էր հաւանել է. բայց խոստ չուրէնք կորցրած»։ «Թող սովորածի կէտը սովորէին միայն թէ հոգեւորական լինէր»։ Եւ այս օտարոտի դատողութիւն յայտնող հայր—սուրբը ս. իշմիրաճին ձեռնարանի ուսումնական մասի տեսուչ է այժմ Ուշագործիական արժանիք է և այն, որ այսպիսի գաղափարները շատագոյնները նոր և գիտնական համարվածներն են, այն ինչ հինները նրանցից աւելի ազատամիտ և համբերող են (աստիճան կարող եմ բազմաթիւ օրինակներով ապացուցանել)։ Վերջապէս պէտք է խոստովանել, որ վարդապետը լաւ էր, որ դպրոցի ղեկավարը ներշնչանքներ, իսկ ընտրելուց և ընդունելուց յետոյ երկուսն ևս անխտիր նայն իրաւունքները չը տալ յայտնի անիրաւութիւնն է, իմ կարծիքով։

Նամակս երկարացաւ. ուստի այստեղ ընդհատում եմ խոստանալով շարունակութիւնը շուտով ուղարկել։

Կապույտայի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք ԲԱՅԱՌԻ մէջ պ. Աւագ Գրիգորեանցից հրատարակված լրագրող, հատոր IV-որդ Գրքի գինն է մի րուբլ։ Օտարաբաղաճացի ցանկացողները կարող են դիմել Բազու այս հասցեով. ВЪ БАЗУ, ДРАЗУ Лазаревичу Григорьеву.

Կերակր օր, նոյեմբերի 12-ին, ժամը 10-ին երեկոյեան մի զարմանալի և շատ ցանկուն գողութիւն է պատահել ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Արժեքները գալիքէն զիւրազանք ջուրաղարի միջարկանի տան մի հրէայ սփերէի, կամ ժամագործի խանութը գաւթի կողմից մտնելով, գողը խտակել է ամբողջ խանութը տանելով բոլոր մէջը գտնված թանկագին իրերէնները. փողոցի դուռը ամբողջ ժամանակ փակված էր մնացել։ Պօլիցիան եկաւ, բայց դատաստանական քննիչը իրան երկար ժամանակ սպասել տալով, վերջը իմաց տուեց որ չէ կարող գալ, որովհետեւ արդէն ուշ է։ Խանութի մէջ գտնվեցաւ հիւանդ մի գործիչ, որով երեկ բոլոր արկիւնը բաց էին արել։ Գաւթի վրա կայ, մի կատաղի շուն, որ բոլորովին չէր հաշտւում։

ՍՈՒՐԱՄԻՑ մեղ գրում են. «Այլ գիւղի պաշտօնակատարութիւնից հրաժարեցրած Դաւիթ քահանայի մասին «Մշակի» մէջ մի քանի լուրեր կային սպված։ Ահա նրա քաջագործութիւնների օրինակը։ Օրերումս գիւղացիներից մէկի երեխան հիւանդանում է։ Դաւիթ քահանայի խորհրդով հայրը չէ կանչում միւս քահանային երեխային սրբութիւն տալու համար, իսկ երեխայի միտնելուց յետոյ նոյն քահանայի զրդմամբ հայրը ինքը թաղում է առանց եկեղեցական արարողութիւնը կատարելու։ Նորերումս էլ հաշտարար դատաւորի մօտ նոյն քահանան մի փառաւորանի երգվել է տալիս, չը նայելով, որ ոչինչ իրաւունք չունէր»։

ԵՐԵՒԱՆԻՑ մեղ գրում են. «Այսօր շատ ցուրտ է։ Փայտը և անոթը թանց գնում են ծախվում։ Թատրոնաւորների խումբը վաղուց դիտաւորութիւն ունի մի ներկայացումն տալու, բայց դեռ ոչինչ չը կայ։ Մէկ ուրիշ խումբ էլ կամենում է ներկայացնել մի պիեսա յօգուտ «Սահակաւունքան» օրերոց դպրոցի։ Նորերումս այստեղ զօրքեր եկան, որոնց քաղաքացիք հիւրասիրեցին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՅԻՄՆԱՅԻԱ

1877-ի գիտնականները 28-ից սկսած մինչև Երկրի գաշադրի վաւերացումը, ինչ որ

Արեւելեան գործերին վերաբերող գօտու-մենտներ կան գտնվում են Փարիզի գեղին գրքում։

Պ. Իւրիժօր յուլիսի 13-ին մի հեռագրով շնորհակալութիւն է պ. Վարդինգտոնին, ասելով. «Վերջին քանակները կօնգրէսի հրաւերը, մեր ձգտումն այն էր, որ մենք նպաստեինք խաղաղութեան վերականգնելուն, առանց որ և ինչ կերպով հեռանալու մեր չէրք գրութեանը»։

Կարդինալ Ֆրանկի յուլիսի 23-ին ուղարկում է մի հեռագիր շնորհակալութիւն յայտնելով Ֆրանսիական կառավարութեան, որ նա կօնգրէսում պաշտպանել է կաթոլիկական կրօնի ազատութիւնը Արեւելքում։

Պ. Վարդինգտոն ուղարկում է մի շնորհակալութիւն, որի մէջ նա պահանջում է ոչ թէ Բերլինի դաշնադրութեան այս ինչ կամ այն ինչ պայմանը կատարուի, այլ թէ դաշնադրի բոլոր կետերը։

Պ. Վարդինգտոն գարձաւ ուղարկում է մի հեռագիր սեպտեմբերի 27-ից, որի մէջ նա ցանկանում է որ Թիւրքիան լաւ ուշադրութիւն պարձնի վերացնելու երկրի միջին անկարգութիւնները և ծաղրածութեան առարկայ չը լինեն այն բոլոր առաւելութիւնները, որ նա ստացաւ օտար պետութիւնների միջամտութեամբ։

Լօրդ Սալիսբուրի յուլիսի 7-ից մի հեռագրով հաղորդում է պ. Վարդինգտոնին Կիւրոսի դաշնադրութեան մասին, որը եղել է այն նպատակով, որ արևմտեան Ասիան չը մնայ անպաշտպան Ռուսաստանի ոտքի տակ։ Նա աւելացնում է որ եթէ Անգլիան չը զբաղւի Երկրորդ, կամ չը տիրի Սուէզեան ջրանցքին, պատճառն այն էր որ չը պաշտպանի Պաւստիային։

Պ. Վարդինգտոնից յուլիսի 21-ից ուղարկած մի հեռագիր հաստատում է այն յուզմունքը, որ Կիւրոսի դաշնադրութիւնը զրկեց ամեն տեղ, մանաւանդ Պաւստիայում։ Այդ հեռագիրը ներկայացնում է լօրդ Սալիսբուրի յայտարարութիւնը որով նա միամտացնում է Ֆրանսիացիներին, իրանց Ասորեստանի և Եգիպտոսի շահերի վերաբերմամբ։

Պաւստիայի յարգում է Անգլիային իբրեւ. ափսոսանք մեծ պետութեան, բայց մի և նոյն ժամանակ նա պահանջում է հաւասար յարգանք գէպի Ֆրանսիացիները իբրեւ. մեծ միջերկրական պետութիւն։ Լօրդ Սալիսբուրի ընդունեց այն փոխադարձ իրաւունքի և յարգանքի հաւասարութիւնը, որ պէտք է թագաւորէ Եգիպտոսում Ֆրանսիական և անգլիական շահերի վերաբերմամբ։ Լօրդ Սալիսբուրի պատասխանելով վերջի յիշած հեռագրին, հաստատում է Անգլիայի անկեղծ ցանկութիւնը բոլոր միջոցներով և բարեկամաց գործել Պաւստիայի հետ Եգիպտոսի երաժնական աղբիւրները աւելացնելու և թէ այդ կրկու պետութիւններն էլ ցանկանում են, որ խղճով իշխանութիւնը անդրդվել մնայ, և նա աշխատի և աշխատի պարզաբեր վճարել։ Ցեղաց աւելացնում է լօրդ Սալիսբուրի, որ նրանց ընդհանուր ցանկութիւնն էլ այն է որ խղճով կատարարութիւնը ցերեկան լինի, ժողովուրդը յաշտութեան մէջ լինի, և պարտքերն էլ վճարվեն։

ԹԻՒՐԻՒՄ

Բարձրագոյն Դրան կարգադրութիւններով և Ռուսաստանի բարեկամական յարաբերութեամբ, յոյս կայ, որ Մակեդոնիայի պատասխարութիւնը ոչինչ հետեւանք չի ունենայ։

Ռուսները կայանաւորեցին 500 բոլորներ, որով կամենում էին Մակեդոնիա մտնել։

Մինիստրները խորհուրդը վիճեց Կոստուրի հարցի մասին։

Բուլգարի գործակալները, բացի առանձին, միմեկին բոլորների պատգամաւորութիւնները ընդունելու։

Սուլթանը իր մի ամսական սոսիքը 50,000

Ֆունտ, նուիրեց յօգուտ հրաժարական տրված օֆիցերներին։

Պ. Վօլք ներկայացրեց գործակալներին Բուլգարի կազմակերպութեան համար մի շատ ազատամիտ ծրագիր։

Կարծում են թէ ռուսները Բուլգարի ֆինանսական վարչութիւնը կը թողնեն 60,000 ռուսներ գտնվում են Անգլիանուպուր, 180,000 Կեմոսիկա, Լուկեբուրգաս և Միլիա Բուրգաս գծերի վրա։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՅՈՅ

Էրզրում, 18 հոկտեմբերի

Հակառակորդի տնօրինութիւնները միշտ մեր կամքից ազատ են կատարվում. երբեմն մէկ հարուստով նա քանդում է բոլոր մեր սրամիտ պաշտները, իսկ միւս անգամ, յառաջ բերելով անակնկալ դիպուած, նա ստեղծում է նոր հանգամանք և նոր պայման։ Գտնվելով Ղարս, դաւիս եմ մի երեկոյ Լաղարի մօտ, նա հարցնում է նորութիւն, ես յայտնում եմ միայն իմ խնդիրը արձակուրդ առնելու համար գէպի ծնողք, որ ինձ սպասում էին անհամբեր։ «Հա, ասեց զօրապետը սիրալիք ձեռք, դու վաղը կերթաս, բայց ոչ Նուխի, դու կերթաս Էրզրում»։ «Էրզրում կրկնեցի մտքումս զարմացմամբ և մնացի լուռ։ «Դու կերթաս այնտեղ, կրկնեց իր սովորական հանգստութեամբ ծանրաբարոյ հրամանատարը, այնտեղ կը տեսնվես իմայիլ փաշայի հետ, կասես..... Ուշի ուշով լուռ էի նորա հրամանները, մնալով բաւական աղպած հանգամանքների տարօրինակ կերպարանաւորութեամբ, Հրահանգների մէջ Ալալիբեքոյց հարցը խաղում էր առաջին դերը։ Արժեքնայէս զբաղված նոր անհարգութեամբ միւս առաւօտ սկսեցի պատրաստվել ճանապարհ ընկնելու։ Արժեքնայի մօտ մտքիս մէջ Էրզրումի լուսազեղ յիշողութիւնները և տպաւորութիւնները, տանում էին ինձ երեկայաբար իմ եւսագոտ բարեկամներս մօտ, կանգնացնում աչքիս առաջ նոյն գիւրա-յափշտակ խումբերը և խոսեցնում իրանց վիճակից, բայց նոյն խոսակցութիւնը և հաշիւը լուռ էի կարծես մեծ միջթարմանով, վառն դիարդէն խնայած էի որ Էրզրումից չարագայ սր-խաղված են գտնվել իրանց երեկոյութեանց մէջ տաճկաց բարբարոսութեանց և անիրաւութեանց վերաբերմամբ մեր զօրքերը գնալուց յետ։ Աչքիս առաջ երևում էին ու անցնում ևս Էրզրումի հրաշալի տիպերը, հայրենիքի չքնաղ դէպքը և իմ ծանօթ սրամիտ ու արժանաւոր օրիորդ պատկերը, որ երևում էր բոլորեղծ ու գունավառ այն հեղինակաւ խօսքերից, որ դիտմամբ ասում էի նորան տաճկականի քաղաքական անընդունակութեան վրա։ Այսպէս, մտքով և հոգով արդէն Էրզրում էի, գտնվելով դեռ ևս Ղարս, բայց վրանաւոր երկրորդ օրը, երբ մի շքեղ ընկերութեան հետ, մեծարգոյ Գրիգոր-Էֆէնդի Շաբանեանի, դիմեցի նպատակիս։ Մարաւալ փափագով շտապում էի անցնել սահմանը և մտնել առաջին հայրենակ գիւղը տեղեկութիւն հարցնելու նոյն վիճակից, բայց սահմանը դեռ հեռու էր, իսկ Գէօփրի-քէօյը աւելի ևս։ Սա մի բազմամարդ ևս հարուստ հայոց գիւղ է, որի բնակիչները Էրզրումից անցնելու ժամանակ ծանրաբարոյ անէծք էին դրել իմ վրա, եթէ մեր զօրքերը քաշվելուց յետ ենթարկվէին չարեաց, մնալով իրանց տեղերը իմ խօսքերից համոզված։

Նա ինչպէս է շատ հնուց և անուանվելիս է եղել Վաղարշաւան. նորա մօտ Արաքսի երկու ճիւղերը միանում են և անցնում մի հոյակապ կամուրջի տակով, որի անունով Թիւրքերը ասում են Կամուրջի-գիւղ (Գէօփրի-քէօյ)։ Քարայէն չի նուաճել մի գիւղը միացնում է սուր անկիւնով երկու պատանոց ճանապարհներ, որ գնում են Էրզրում Կովկասի սահմաններից։ Էլ չասելով այն քանի քանի անգամ այս ճիւղաւոր ճանապարհով յառաջացել են ու յետ անհանջել յաղթած և յաղթված զօրքեր, Գէօփրի-քէօյը 25 տարեկան ընթացքում երկու անգամ ակաւստեան է եղել օսմանցոց ջարդված զօրքերի յաջողակ անցքին, որոնք յետ փախելով մէկ ճանապարհով, կարողացել են հասնել Կամուրջին աւելի շուտ, քան թէ միւս կողմով առաջը եկողը ռուս զօրապետները և ինչ նոյնանման ցաւալ հանգամանք. երկու անգամ էլ թշնամեաց հալածելու ժամանակ մեր զօրապետներն մէջ տեղիք է ունեցել սոսիսութիւն և թշնամական յարաբերութիւն, վառնորոյ առաջը փակող անհոգ և անտարբեր է գտնվել դէպի թշնամու վիճակը, չուզելով բաժանել իր փառքը նորան յետից հալածողի հետ։ Ահա ինչու Մուրադիկի ժամա-

նակ Արդի-փաշան արժաւ այնպէս անմիտ Սուլթի և Գօնդուկով-Կօրսակովի ձեռքից, ինչպէս Լօրիս-Մէլիքովի ժամանակ իմայիլ-փաշան, Գեյմանի և Տէր-Ղուկասովի Այս վերջինը գաւի էր յետեից, իսկ միւսը առաջից, բայց երկուսն էլ կորցրին ոսկի ժամերը աւելորդ հանգստութեան և յետաձգութեան մէջ. եթէ հիմա ընտ է ինչ ասում են, թող Աստուած և պատմութիւնը դատէ մեղաւորին....

Ամեն գիւղի առաջնիւթայ խումբերը լինում են միշտ մանկաւորներ, այնպէս ևս Գէօփրի-քէօյի. տեսնելով օֆիցեր և զաւակներ, բարձրացրին նոյն մի ուրախակից աղմուկ, «ուսուր դահի կուգայ, աչէ, ուսուր դահի կուգայ» խօսքերով. շուտով հաւաքվեց և բոլոր գիւղը, որոնցից շատերը ինձ ճանաչում էին—եւ նոյն քաղաք խաւորել էի որ մեր գնալուց յետ ոչինչ չարեաց չեն հանդիպի, բայց միայն բարիք, որ շուտով պիտի հասնին։ Միշտ համեստ հայ կանայք, էլ չը կարողանալով զսպել իրանց ուրախութիւնը, յառաջանում էին վստահ կերպով ու խանդաղաւանք բարեկամով ասում. «Աստուած, էլի ռուս տեսանք, մենք քու ոտիդ մեռնենք այ ռուս»։ Այս ամենը ինձ խիտ շարժում էր, երբ տեսնում էի իմ հարազատներին ազատութեան կաթոս զբաղմունքով.... «Միթէ, մայրիկ, ձեզ դարձեալ կը ներգացնեն տաճկիները, հարցրի հետաքրքրութեամբ նոյնանց մէկին»։ «Ձէնիդ դուրբան, ասեց նա զօրդոջուն ճայնով, ռուս թագաւորի շնորհից, փառք Տէրին, միջ էլ հիմայ բան ասող չը կայ, բայց ինչ ձեզ հետ ապրելն է, այն էլ այլազգիների հետ ապրելն է»։ Եւ մտադիր էի անցնել Հասան-Ղալա, բայց դիւղացիք յայտնեցին, որ եթէ մերձեւ իրանց հիւրասիրութիւնը, ինձ ստիպմամբ կը պահեն գիւղերը։ Եւ հնազանդիցի, թէպէտ ուղում էի շուտով հասնել Էրզրում իմ պաշտելի բարեկամ կամաւարականի տեսակցութեան, որ սպասում էր ինձ ժամից ժամ։ Շուտով ժողովեցին գլխիս բոլոր գիւղացիք։ «Ինձ չէիք հաւատում, ասեցի նոյն, որ տաճկիները ձեզ ոչինչ չեն արի, հիմայ տեսնում էք, մնալ զաւթեցող լաւ է»։ Ամեն կողմից երախտագիտութեամբ խոնարհացնում էին գլուխները, լսած լինելով արդէն Ղարսից ալալիբեքոյց զղջումը և ներութիւնները։ Երեկոյեան երկար զբաղեցրին ինձ խօսակցութեամբ իրանց արեւան և ապագայ վիճակի վրա. վերջապէս եկան տան արիւր երկու փոքրիկ տղաները և հարցրին ռուսներին. «ՈՐԱՄԻ, ի՞նչ արեւան քաղաքի քաղաքի»։ Նոյն ընթերց էին առաջարկում և ռուսներին սովորել էին պաշարման ժամանակ գիւղում մնացած սղջալիներից. Գէօփրի-քէօյը այդ ժամանակ հիւանդանոց էր. Գօնդուկով առաջարկեց նոյն մի քանի հոտ արձաթաղաւոր, բայց իրանց հօր թիւադրութեամբ, նոյն տարեցին իմ ընծան, ինչպիսիք փողի փոխարէն իրանց համար ալքեմարան բերել Էրզրումից։ Չմայնմամբ ընդունեցի այդ առաջարկութիւնը, որ նշան է լաւ ձգտումների ևս լաւ ապագայի, որ պիտի պատրաստէ նոյն ուսումը և լուսաւորութիւնը։ Միւս օր արդէն Էրզրում էի իմ բարեկամներին գրկին և կամաւարականի մօտ, որը ինձ պատեց դիմաւորելով քաղաքից դուրս։

Գրիգոր Նիկողոսեան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԱՍԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ՎԻԵՆԱ, 13/25 նոյեմբերի։ Նոյն օրագրի գրաւելու մասին Բ. Դրան և աւստրիական ղեկավար Ջիլի մէջ շարունակվում են բանակցութիւնները։ Բ. Դրանը վճռեց ընդունել առաջարկութիւնը այն պայմանով, որ Աստուրիան Նոյն օրագրի նահանգում երեք պատերազմական կետերից կը հեռացնէ իր զօրքերին և թող կը տայ նրանց գրաւել թիւրքաց զօրքերով։

ԲՈՒՐՈՒՐՆՍ, 13/25 նոյեմբերի։ Նայելով Ռուսաստանի հետ ունեցած բանակցութիւններին ռուսական զօրքերը կը դնուին Դորոնջա նոյնիքերի 17-ին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 նոյեմբերի։ Պետական բանկի 50% տոմսեր առաջին շրջանի արժէ 96 ռ. 87 Կ., երկրորդ 95 ռ. 25 Կ., երրորդ 95 ռ. 37 Կ., չորրորդ 95 ռ. 37 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 335 ռ. 5 Կ., երկրորդ 228 ռ. 5 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 92 ռ. 5 Կ., երկրորդ 91 ռ. 25 Կ., ոսկի 8 ռ. 45 Կ.։ Ռուսաց 1 ռուբլ. Լօնդոնի վրա արժէ 23, 4 պէսն, ռուսաց 100 ռուբլ. Գերմանիայի վրա արժէ 200 մարկ, Փարիզի վրա 246 ֆրանկ 50 սանտիմ։ Տրամադրութիւնը հանդիսաւ է։

